ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 94

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-042-0381-0020 կադաստրային ծածկագրով 0.5518 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր	07-042-0381-0020 կադաստրային ծածկագրով 0.5518 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր
Իսկ 07-042-0401-0081 կադաստրային համարի 5.3811 հա մակերեսով հողամասից 0.57 հա մակերեսով հատվածում, 07-042-0401-0082 կադաստրային ծածկագրով, 5.0 մակերեսով հողամասում աղյուսակ 2-ում նշվածից բացի թույլատրել կառուցել 4-7 հարկանի (ներառյալ 7-րդ հարկը) բնակելի շենքեր:	Իսկ 07-042-0401-0081 կադաստրային համարի 5.3811 հա մակերեսով հողամասից 0.57 հա մակերեսով հատվածում, 07-042-0401-0082 կադաստրային ծածկագրով, 5.0 մակերեսով հողամասում աղյուսակ 2-ում նշվածից բացի թույլատրել կառուցել 4-7 հարկանի (ներառյալ 7-րդ հարկը) բնակելի շենքեր, իսկ 07-042-0381-0020 կադաստրային համարի, 0.5518 հա մակերեսով հողամասում վերը նշվածից բացի թույլատրել կառուցել միչև 6 հարկանի (ներառյալ 6-րդ հարկը, որից 1 հարկը ստորգետնյա է, իսկ մնացած 5 հարկը՝ վերգետնյա) բնակելի շենքեր:

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Ջրվեժ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ձորաղբյուր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող		
		Դ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «28» «փետրվարի» 2024 թ.